Շուշանիկ Կուրղինյան

Նամակ Ավետիք Իսահակյանին

11 նոյեմբերի, 1907 թ.
Ռոստով-Դոն
Հարգելի կոլեգա պ. Ավետիք.

Ուղարկում եմ երկու կտոր գրվածք և գիրքս. առ այժմ բավականացեք դրանցով: Սաստիկ զբաղված եմ, հետո կուղարկեմ այլ տեսակներից՝ իմ մեջ կատարվող նոր հոսանքից...

Գիրքս՝ չեղավ այն, ինչ-որ կուզեի: «Նոր կյանքի» փակվելու պատճառով ինձ օգնողները կապույտ քեռիների մոտ հյուր գնացին, ամբողջ գործը մնաց անտեր, անտիրական, ռուս գրաշարների ձեռքում: Ինչպես գիտեք, ես էլ զբաղված եմ պաշտոնով ամբողջ օրը... Մոտ հարյուր օրինակ էլ հոգուն հանգուցելոց եղավ դեռ չստացած: Մի խոսքով սոցիալիզացիայի հանդիպեց:

Բարևեցեք իմ կողմից պ. Հովհ. Թումանյանին: Ես նրա հետ ծանոթացել եմ Աղեքսանդրապոլում իմ առաջին ցենզորի (Հովհ. Կոստանյան) միջոցով և մինչև այժմ հիշում եմ:

Շատ բան ունեմ գրելու, մնա մյուս անգամ: Ահագին գործ կա առաջիս: «Բանվորուհի» երկիս համար նամակներ ստացա. ինչպես շուտ է զգացվում մոտիկ ցավը...

Ընդունեցեք բարևներս՝
Շ. Կուրղինյան

Հ. Գ. Իզուր ծրարիս վրայի հասցեով չեն ուղարկում թերթը, այդպես շատ ուշ եմ ստանում: Հայտարարությունը փոխելով դնել տվեք և գրքիս վրայի հասցեն:

նույն: